

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՒ ԱՐՑԱԽԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՀՈԼՈՎՈՅԹԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ (2015)

ԶԱԼԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ
a_e_c@cyberia.net.lb

Հայոց դեմ գործադրուած Ցեղասպանութեան սկզբնաւորութեան հարիրամեակի տարին էր 2015ը: Սկզբնաւորութիւն՝ քանի Հայոց Ցեղասպանութիւնը գործադրուեցաւ 1915էն 1923 տարիներուն:

Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնները եւ Սփիոյքը հարիրամեակը նշեցին պաշտօնական եւ ժողովրդային մեծ ձեռնարկներով: Վատիկանի մէջ 12 Ապրիլին Ֆրանչիսկոս Պապի պատարագը, Ապրիլ 24ի Լոս Անճելըսի ցոյցը 130,000 մասնակիցներով, Պէյրութի ցոյցը 50,000 մասնակիցներով եւ Թաքսիմ Հրապարակի ցոյցը Իսթանպուլի մէջ աչքառու էին: Ծիծեռնակաբերդի մէջ պետական չափանիշով հարիրամեակի նշումը լաւ կազմակերպուած բացառիկ ձեռնարկ մըն էր: Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին, Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Հոլանտ, ոչ միայն ներկայ էին, այլեւ խօսք առին. ներկայ էին նաեւ Կիպրոսի եւ Սերպիոյ նախագահները:

Ազգային առումով յաջող իրագործում մըն էր համահայկական հոգակազմիրին հրապարակումը հարիրամեակին առիթով, որ կը նշէ յառաջիկայ հանգրուանի գործունէութեան ծիրը՝ պատրաստել իրական թղթածրար հատուցման պահանջներու գծով եւ սահմանել հողային հարցը՝ Հարիրամեակի աւարտին ծրագրուեցաւ նաեւ Համահայկական Խորհուրդի մը ձեւատրումը:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, 23 Ապրիլին Էջմիածնի Մայր Աթոռին մէջ յատուկ արարողութեամբ սրբադասեց Հայոց Ցեղասպանութեան նահատակները, ի ներկայութեան քրիստոնեայ եկեղեցիներու պետերուն կամ ներկայացուցիչներուն, նմանապէս գրաւելով միջազգային ուշադրութիւն:

Թուրքիա Կալիփօղլի ճակատամարտին նշումը փոխադրած էր Ապրիլ 24ին², խանգարելու եւ նսեմացնելու համար Հայոց Ցեղասպանութեան հարիրամեակի նշումները եւ շեղելու միջազգային հաղորդակցական միջոցներու ուշադրութիւնը Հայաստանէն եւ հայաշատ այլ վայրերէ: Թուրքիոյ մէջ Կալիփօղլի ճակատամարտի տօնակատարութեան ներկայ էին Իշխան Չարլզ, որ Միացեալ Թագաւորութիւնը կը ներկայացնէր եւ 17 այլ երկիրներու (որոնցմէ 11ը իսլամական) նախագահներ կամ վարչապետեր: Այդուհանդերձ, Հայոց Ցեղասպանութեան

անելի անդրադարձ եղաւ միջազգային հեռուստատեսութեան, մամուլի եւ համացանցի վրայ քան Կալիփոլի թրքական միջոցառումին: Թրքական PRnet տեղեկատուական գործակալութեան խոստովանութեամբ, նոյնիսկ թրքական լրատուական աղբիւրներ անելի շատ Հայոց Յեղասպանութեան մասին գրած են քան՝ Կալիփոլի Ճակատամարտին³: Ապրիլ 20-26ի ընթացքին, Թուրքիոյ մէջ Հայոց Յեղասպանութեան մասին լոյս տեսած է 2404 հրապարակում⁴: Հայաստանի մէջ հարիւրամեակի ձեռնարկներու համակարգող Վիգէն Սարգսեան նշած է թէ աշխարհի հեղինակատոր հեռուստաընկերութիւններու կողմէ կատարուած հարիւրամեակի պաշտօնական տօնակատարութեան անդրադարձումին աշխարհի մէջ մէկ միլիոն 250 միլիոն մարդ հետեւած է⁵:

Բացառիկ էր Վատիկանի Ս. Պետրոս տաճարին մէջ Ֆրանչիսկոս պապին պատարագը, որուն մասնակից էր Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց կաթողիկոս-պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ.: Պապը իր խօսքին մէջ յիշեց Յովհաննէս Պօղոս Բ. պապը, որ 1915ի ողբերգական իրադարձութիւնները որակած էր Ի. դարու առաջին Յեղասպանութիւն եւ վկայակոչած՝ Պենտիկոն ԺԵ. պապին 1915ին արտասանած «Հայ ազգը դէպի բնաջնջում կ'առաջնորդուի» խօսքը⁶: Պատարագին ներկայ Ամենայն Հայոց Գաբեգին Բ. կաթողիկոսը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը եւ խօսք առին: Շնորհիւ միջազգային հեռուստիւի ցանցերուն, ո՛չ միայն աշխարհի համայն կաթողիկէները հետեւեցան այս պատարագին ու տեղեկացան հայոց դէմ գործուած ցեղասպանութեան, այլեւ՝ համայն աշխարհի ժողովուրդները:

ՃԱՆԱԶՈՒՄՆԵՐ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար կարեւոր յաջողութիւններ արձանագրուեցան: Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող երկիրներու շարքին միացան Աստրիա, Լիքսեմպուրկ, Պրագիլ եւ Փարակուէ⁷: Հոլանտայի խորհրդարանը ճանչցաւ հայոց, ասորիներու եւ յոյներու ցեղասպանութիւնը⁸: Չիլիի խորհրդարանը 78 կողմ, (1 դէմ, 3 ձեռնպահ) քուէներով, ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը, միանալով Չիլիի ծերակոյտի ճանաչումին, որ կատարուած էր 5 Յունիս 2007ին⁹: Պելճիքայի խորհրդարանը եւս ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը միանալով Պելճիքայի ծերակոյտին, որ արդէն ճանչցած էր 1998ին¹⁰: Պելճիքայի վարչապետ Շարլ Միշլէ, կառավարութեան անունով ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը¹¹:

Բաց աստի, Գերմանիոյ նախագահը 23 Ապրիլին Պերլինի Մայր տաճարին մէջ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակի արարողութեան ատեն 1915ի Հայոց Եղեռնը Յեղասպանութիւն կոչեց¹²: Գերմանիոյ խորհրդարանը ձեռնարկեց Հայոց Յեղասպանութեան

հարցի քննարկման: Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողան եւ վարչապետ Ահմետ Տաւթօղլու շատ խնդրած են որ այդ ճանաչումը չըլլայ. քաղաքական նկատումներով վարչապետ Անկելա Մերքել խոստացած է հարցը յետաձգել¹³:

Կիպրոսի խորհրդարանը միաձայնութեամբ որդեգրեց Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրէնք մը 2 Ապրիլ 2015ին: Հայոց Յեղասպանութիւնը ժխտողները հինգ տարուան բանտարկութեան եւ 1000 եւրոյի վճարման պիտի դատապարտուին¹⁴: Ֆրանսայի մէջ ալ, երեսփոխան Վալերի Պուայիէ, խորհրդարանի 3 Դեկտեմբեր 2015ի նիստին յաջողեցաւ Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրէնքի նախագիծը Արդարութեան յանձնաժողովին յղել:

Զեխիոյ խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու կոմիտէն միաձայնութեամբ Հայոց Յեղասպանութեան նուիրուած բանաձեւ մը ընդունեց 14 Ապրիլ 2015ին¹⁵: Զեխիոյ արտաքին գործոց նախարարը Յունիսին Ծիծեռնակաբերդ այցելեց, իսկ երեսփոխանական ժողովին նախագահ Եան Համաչէք յայտարարեց, թէ Զեխիոյ դիրքորոշումը յայտնի է եւ յստակ բոլորին համար, թէ՛ չեմպատասխանատուներ մասնակցած են Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի հանդիսութիւններուն¹⁶: Այդուհանդերձ, Զեխիոյ խորհրդարանը Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ չէ քննարկած եւ քուէարկած:

Եւրոպական Խորհրդարանը 14 Ապրիլին Թուրքիան հրաւիրեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու¹⁷: Ասիկա երրորդ բանաձեւն էր նոյն մարմինին կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող 18 Յունիս 1987ի եւ 28 Սեպտեմբեր 2005ի բանաձեւերէն ետք:

Արժանիքին, որ ատենին ճանչցած էր Հայոց Յեղասպանութիւնը, իր ծերակոյտին նոր բանաձեւով անդրադարձաւ հարիւրամեակին¹⁸: Նոյնպէս եւ Ռուսիոյ տուման Ապրիլ 24ին Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին անդրադարձաւ: Սուրիոյ վերեւ Թուրքիոյ կողմէ վար առնուած ռուսական ռմբակոծիչ օդանաւի միջադէպին յաջորդող հակաթուրք տրամադրութեան օրերուն, տումայի Արդար Ռուսաստան խմբակցութեան առաջնորդ Սերկէյ Միրոնով օրէնքի նախագիծ ներկայացուց Հայոց Յեղասպանութեան ժխտումը քրեականացնող: Ցարդ այդ ուղղութեամբ քուէարկութիւն չեղաւ:

Լատին Ամերիկայի խորհրդարանը, որ Լատին Ամերիկայի եւ Քարիպեան Ծովի երկիրներու 23 օրէնսդիր մարմինները կը համախմբէ, 31 Յուլիսին Հայոց Յեղասպանութիւնը ճանչցաւ յատուկ բանաձեւով մը¹⁹:

ԱՄՆէն նոր նահանգներ միացան Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող նահանգներուն, անոնց թիւը հասցնելով 43ի: Այդ նահանգներն էին Հարաւային Տաքսթա, Նեաւտա եւ Ծորճիա²⁰: Վերջիններս Ապրիլ 24ի օրը Հայոց Յեղասպանութեան Յիշատակութեան Օր յայտարարեցին:

Մայիսի սկիզբին Ուաշինգթոնի Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ հարիրամեակի նշումը ներկայութեամբ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն, Հայաստանի Հանրապետութեան նախագահին, ԱՄՆի փոխնախագահ Ժօ Պայտընի եւ ՄԱԿի մօտ մնայուն ներկայացուցիչ Սամանթա Փաուըրի:

Թէեւ Սպանիոյ ծերակոյտը 4 Մայիսին 130 քուով մերժեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու բանաձեւը (որ ստացաւ պասք 14 երեսփոխաններու կողմ քուէները եւ 68 ձեռնպահութիւն), սակայն սպանական որոշ քաղաքներ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցան: Ասոնք էին.- Սան Սեպասթիան, Պեթերա, Պուրխասորի, Փիւթօ, Սիյա, Սանթա Մարկարիթա, Ալտայա եւ Ալգերա քաղաքները, ինչպէս նաեւ Արակոնի ինքնավար համայնքը²¹:

Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող երկիրներու ենթախորհրդարանները եւս միացած են այդ ուղեգծին: Այսպէս, Քորսիքայի (Ֆրանսա) եւ ֆլամանական(Պեճիքա) խորհրդարանները եւ Վիեննա մայրաքաղաքի (Աստրիա) քաղաքային խորհրդարանները ճանչցան Հայոց Յեղասպանութիւնը²²: Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած Իտալիոյ մէջ, տեղական ինքնակառավարման մարմիններու 99 խորհուրդներ, ցարդ ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը: 2015ին Իտալիոյ Փիէմոնթի նահանգի Իւրէայի քաղաքային խորհուրդը, Ռաւեննա եւ Լ'Աբուիլա քաղաքները, Ապրուցցօ նահանգի նահանգային խորհրդարանները եւ Վենետիկի Մուրանօ վարչական շրջանի քաղաքային խորհուրդը յաջորդաբար ճանչցան Հայոց Յեղասպանութիւնը²³: Նման ճանաչումներ ըրած են նաեւ Արժանքինի Միսիոնէ նահանգը եւ Պրագիլի Սաօ Փաօլօ քաղաքը:

Հայոց Յեղասպանութիւնը չճանչցող երկիրներէն Աստրալիոյ Ուիլոպի եւ Ռայտ քաղաքները, ինչպէս նաեւ նաեւ Ուքրանիոյ Տնեփրովիթթօրովսք քաղաքը²⁴ ճանչցան Հայոց Յեղասպանութիւնը:

ԱՄՆ Նախագահ Պարաք Օպամա, իր տարեկան յայտարարութիւնը կրկին կատարեց Հայոց Յեղասպանութիւնը Մեծ եղեռն կոչելով²⁵: Իսլանտայի կրթութեան նախարար Իլուկի Կոնարսընը առանց Յեղասպանութիւն բառը նշելու յայտարարեց թէ կը կիսէ հայ ժողովուրդին ցարդ «այդ սարսափելի դէպքերու առնչութեամբ»²⁶: Իրլանտայի եկեղեցին կոչ ուղղեց Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու²⁷:

Սերպիոյ խորհրդարանին մէջ երկու երեսփոխաններ Հայոց Յեղասպանութեան բանաձեւ առաջարկեցին, սակայն մինչեւ օրս չիմացանք անոր ճակատագրին մասին²⁸:

Պարոնտիի Քարոլայն Քոքսի ջանքերով, Միացեալ Թագաւորութեան Լորտերու Պալատը Յունիս 16ին քննարկեց Հայոց Յեղասպանութիւնը, բայց ճանաչման որոշում չընդարկեց²⁹: Հայոց

Յեղասպանության հարիւրամեակի ոգեկոչման արարողություն մը տեղի ունեցաւ Ուեսթմինսթըրի Աբբայարանին մէջ, իշխան Չարլզի եւ նախագահ Ա. Քարգսեանի ներկայութեամբ եւ Լոնտոնի Անկիքան Եկեղեցւոյ Ռիչըրտ Չարթրիս եպիսկոպոսին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.³⁰ հանդիսապետութեամբ: Անկիքան եպիսկոպոսը իր խօսքին մէջ թէեւ անդրադարձաւ հայոց նահատակութեան, բայց ցեղասպանութիւն բառէն խուսափեցաւ:

Վիեթնամի արդարադատութեան նախարար Հա Եունկ Կունզը երեանի մէջ յայտարարեց թէ Վիեթնամ կը քննարկէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հնարաւորութիւնը: Նշելու է թէ 9 Դեկտեմբերին, Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին առթիւ Հանոյի կաթողիկէ արքեպիսկոպոսը պատարագ մատուցեց³¹:

Երեք կարեւոր կազմակերպութիւններու քայլերը կ'արժէ նշել.- Ա. Յեղասպանագէտներու Միջազգային Ընկերակցութիւնը Թուրքիոյ նախագահ Էրտողլանին կոչ ուղղեց ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը:

Բ) Ամերիկայի Հրեական Հանրային Աշխատանքի Խորհուրդը 21 Հոկտեմբեր 2015ին կոչ ուղղեց ԱՄՆ-ին ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը³²:

Գ) Եւրոպայի Կանաչներու Կուսակցութիւնը (որ համաեւրոպական քաղաքական կուսակցութիւն է, 45 Կանաչներու Կուսակցութիւն համախմբող, որ նաեւ 50 երեսփոխան ունի Եւրոպական Խորհրդարանին մէջ), ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը³³:

Աշխարհի յայտնէն իրազեկ եղաւ Հայոց Յեղասպանութեան իրողութեան. նոյնիսկ հեռաւոր Մոնկոլիոյ մայրաքաղաք Ուլան Պաթորի հայկական ակումբին մէջ նշուեցաւ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը³⁴: Մինչեւ իսկ Նոր Զելանտայի բնիկներէն Նկափուի ցեղախումբին պետը՝ Տէվիտ Ռանքին, 7 Ապրիլին, Նոր Զելանտայի մասրիները հրափրեց Անզաքի (Կալիփոլի) 100 ամեակի տօնակատարութեան դէմ պայքարիլ, քանի Թուրքիա 25 Ապրիլէն 24 Ապրիլին բերած էր տօնակատարութիւնը³⁵: Իսկ Սիտնիի մէջ հայկական եւ յունական բողոքի ցոյց մը կատարուեցաւ, քանի որ տեղւոյն Հայտ Փարքին մէջ կանգնեցուցած էին Աթաթուրքի յուշակոթողը³⁶: Հայոց Յեղասպանութիւնը չճանչցած Նորվեկիոյ մայրաքաղաքին մէջ հայեր ցոյց ըրին, որուն մասնակցեցան Ֆրիտիոֆ Նանսէնի թոն ու ծողը³⁷: Ճափոնի մէկ համալսարանին մէջ հայկական խաչքար զետեղուեցաւ հարիւրամեակին աղիթով:

ԹԵՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԺԵՏԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Հայաստան չմասնակցեցաւ Փարիզի Conseil Scientifique Internationalի 25-28 Մարտ 2015ի խորհրդաժողովին, որ կը քննարկէր

Հայոց Յեղասպանութիւնը 63 ցեղասպանազէտներու մասնակցութեամբ: Հանդիսութեան ներկաներուն մէջ էր Ֆրանսայի կրթութեան նախարար Տիկ. Նաժաթ Վալոտ-Պելլասսէմը³⁸:

Թրքական դեսպանատունը յաջողեցաւ Մեքսիքո Սիթի մէջ կայանալիք Հայոց Յեղասպանութեան նուիրուած ֆիլմերու փառատօնը առկախել: Մեքսիքոյի արտաքին գործոց նախարարութիւնը, տեղի տալով թրքական դեսպանատան ճնշումներուն, չուզեց որ «Յեղասպանութիւն» եզրը գործածուի Պելաս Արթէի մէջ տեղի ունենալիք երաժշտական ձեռնարկի մը ընթացքին, որ նուիրուած էր հարիւրամեակին³⁹: Նմանօրինակ դէպք մը պատահեցաւ Փեքինի մէջ, ուր Հայաստան կը մասնակցէր Փեքինի Միջազգային Արուեստի 2. Յուցահանդէսին եւ երեք ազերիներ ջանացած էին արուեստի գործի մը վնաս հասցնել 24 Սեպտեմբերին, եւ ցուցահանդէսի բացումէն իսկ առաջ Չինաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը արգիլած էր «ջարդ» «Հայոց Յեղասպանութիւն» եւ «զանգուածային վայրագութիւն» բառերը գործածել ցուցահանդէսին մէջ կամ բաշխուելիք գրքոյկներուն մէջ⁴⁰:

ՄԱԿի Ընդհանուր Քարտուղար Պան Քի Մուն մերժեց 1915ի ջարդերը Յեղասպանութիւն համարել: Իր բանբերին միջոցով ան ըսաւ, թէ Օսմանեան Թուրքիոյ մէջ հայերու հալածանքը «վայրագ յանցագործութիւն է, սակայն պէտք չէ շտապել եւ պատահածը Յեղասպանութիւն եզրով որակել, այլ պէտք է շարունակել համագործակցութիւնը՝ 100 տարի առաջ պատահած կոտորածի փաստերը պարզելու համար»⁴¹: Պան Քի Մուն պէտք է յիշէ որ 1958ին ՄԱԿի Յեղասպանութեան Կանխարգիլման եւ Պատժումի Յանձնախումբի գեկուցաբեր Պենճըմին Ուիթիքըր հայոց զանգուածային կոտորածը Յեղասպանութիւն որակած էր եւ այդ ընդունուած էր ՄԱԿի Մարդկային Իրաւանց Յանձնախումբին կողմէ⁴²: Ակներեւ է որ հոս ալ իր դերը լաւ խաղցած էր Թուրքիան:

Եւրոպական Ատեանին առջեւ Չուիցերիոյ դէմ թրքական Հայրենասիրական Կուսակցութեան ատենապետ Տողու Փերիչէքի դատի վերաքննութեան հարցով 2014ին գրած էինք հետեւեալը. «Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին զուգադիպող, այս եւրոպական ատեանին որոշումը եթէ դրական ըլլայ հայոց դատին նպաստաւոր պիտի ըլլայ, իսկ խօսքի ազատութեան հիմունքով անոր մերժումը կրնայ ժխտական հետք ձգել՝ մանաւանդ հարիւրամեակի տարին»⁴³: Մեր կարծիքով 15 Հոկտեմբեր 2015ին Եւրոպական Խորհուրդի Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի վճիռը հայոց համար աննպաստ էր, որուն համար լոյսները կատարուած էին 28 Յունուար 2015ին: Դատաւորները մեծամասնութեամբ որոշած են որ տեղի ունեցած է մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագրի 10րդ յօդուածի խախտում եւ

այդ հիման վրայ մերժած են Ջովիցերիոյ վերատեսութեան դիմում-նագիրը: Որոշման մէջ դատարանը կրկին 7ի դէմ 10 քուէներով նշած է, թէ իրմէ չի պահանջուիր 1915ի կոտորածներուն ու տեղահանութեան Յեղասպանութիւն սահմանումը, եւ թէ ինք իրատուք չունի այս հարցին նկատմամբ իրաական ուժ ունեցող գնահատական տալ⁴⁴:

Ճիշդ է որ նախադատ ատեանը նախապէս Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը «պատմական վիճելի» նիւթ նկատած էր: Հայաստան ասոր դէմ բողոքած էր իբր երրորդ կողմ, եւ վերի բարեփոխեալ որոշումը՝ յաջողութիւն նկատած: Միայն 7 դատատւորներ Մեծ Եղեռնը Յեղասպանութիւն նկատած էին, սակայն մեծամասնութիւնը՝ 10 հոգի (ներառեալ թուրք եւ ֆրանսացի դատատւորները), նկատած էին թէ պարտաւոր չէին գնահատական տալու: Ճիշդ է թէ նախորդ վճիռին վրայ բարելաւում կար, սակայն ոչ-այնքան որ յաղթանակ նկատուէր: «Հայոց Յեղասպանութիւնը միջազգային տուտ մըն է» ըսող Փերիւնչէքին խօսքի ազատութեան ի նպաստ էր վճիռը: ԱՖՓ ֆրանսական լրատուական գործակալութիւնը իր լուրը խորագրած էր «թուրք քաղաքագէտը իրատուք ունէր հայկական Յեղասպանութիւնը որբանալու [կ'ընէ] եւրոպական Դատարանը»⁴⁵:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Պահանջատիրութեան գծով միակ գործնական քայլը առնորդ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութիւնն էր, որ 28 Ապրիլ 2015ին Թուրքիոյ Սահմնադրական դատարանին մօտ դատ բացաւ, պահանջելով Սիսի իր պատմական կաթողիկոսարանին վերադարձը⁴⁶: Եթէ թրքական դատարանին վճիռը աննպաստ ըլլայ, ինչ որ կ'ակնկալուի, պիտի դիմուի Եւրոպական Ատեանին: Արամ Ա. կաթողիկոսի հրահանգով, 22 Օգոստոսին, չորս միաբաններ իր խօսքը կարդացին Սիսի կաթողիկոսարանի աւերակներուն մէջ, որ 1293էն 1915 կաթողիկոսական աթոռանիստ կեդրոնն էր:

Գալով 2009ի Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն, Հայաստանի նախագահը, 16 Փետրուարին՝ հարիւրամեակի տօնակատարութիւններու նախօրեակին, յայտարարեց թէ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները յետս կոչած է ազգային ժողովէն, քանի Թուրքիան այդ առնչութեամբ ոչ մէկ քայլ առած էր⁴⁷:

Ապրիլ 24ի տօնակատարութիւններէն ետք ռուս ականաւոր լրագրող Վլատիմիր Փոզնէրի իր տուած հեռատեսիլային զրոյցին մէջ, նախագահ Սարգսեան յայտարարեց, թէ փաստաթուղթերու յետս կոչումը, Հայաստանի օրէնսդրութեան համաձայն, իրաական քայլ չէր, այլ՝ քաղաքական: Եթէ թրքական խորհրդարանը վաւերացնէ արձանագրու-

թիւները, ապա Հայաստանի խորհրդարանն ալ նոյնը կ'ընէ, բայց ինք յոյս չունի որ Թուրքիան «յառաջիկային այդ քայլը կ'առնէ»⁴⁸:

Հայաստանի նախագահը Հիւրիէթ թերթին տուած հարցազրոյցին մէջ, որ յոյս տեսաւ 24 Ապրիլին, ի միջի այլոց ըսաւ. «Հայաստանը իր անկախացումից իվեր երբեք Թուրքիային կամ որեւէ այլ երկրի տարածքային պահանջ չի ներկայացրել: Մեր պետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգում նման խնդիր չի եղել եւ չկայ: Սա յստակ է: Մենք միջազգային հանրութեան լիիրաւ եւ պատասխանատու անդամ ենք, որպէս ՄԱԿի անդամ պետութիւն՝ հասկանում ենք մեր դերը միջազգային յարաբերութիւններում, յարգում ենք միջազգային իրաւունքի սկզբունքները [եւ] նոյնն, ի միջի այլոց, ակնկալում ենք նաեւ մեր արեւմտեան հարեանից, որը մինչ օրս ապօրինաբար փակ է պահում մեր երկրի հետ սահմանը՝ այն դարձնելով Եւրոպայի վերջին փակ սահմանը եւ անընդունելի նախապայմաններ է առաջարկում Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման համար՝ չյարգելով միջնորդի դերում հանդէս եկած միջազգային հանրութիւնն ու Ֆիլիփսեան Արձանագրութիւնների տակ դրուած սեփական ստորագրութիւնը»⁴⁹: Նախագահը անելոց թէ խորհրդարանէն յետս կոչած է արձանագրութիւնները: Իսկ երբ ռուս լրագրողը հարցուց հարիւրամեակի կարգախօսի «կը յիշեմ, կը պահանջեմ»ին մասին, Հայաստանի նախագահը ըսաւ. «Պահանջում ենք ճանաչում: Իսկ յետոյ ի՞նչ կը հետեւի, այդ ամէնը բանակցութիւնների առարկայ է»⁵⁰:

Անհրաժեշտ է որ հայկական պահանջքները գէթ ներքին կերպով քննարկուին եւ յստակացուին: Մամուլին մէջ առաւելագոյնէն նուազագոյն պահանջները նշուեցան հարիւրամեակի տարուան ընթացքին⁵¹:

ԹՐԺԱԿԱՆ ԺՄՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ կառավարութիւնը մնաց նոյն ժխտողական կեցուածքին վրայ, թեւեւ քանի մը դիւանագիտական խորամանկ, արտաքնապէս դրական երեւոյժ մանր քայլեր ձեռնարկեց: Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան թոյլատրուեցաւ հոգեհանգիստ կատարել 24 Ապրիլին, որուն ներկայ եղաւ Եւրոպական Հարցերու նախարար Վոլքան Պոզքիրը: Անոր ներկայութեան կարդացուեցաւ նախագահ Էրտողանի գիրը, որ կ'ըսէր թէ ինք կը բաժնեկցէր հայ համայնքին ցաւը «ցաւայի դէպքերուն»՝ Օսմանեան հայերուն զանգուածային տեղահանութեան ատեն⁵²:

Էրտողան քննադատեց Ֆրանչիսկոս պապը՝ ցեղասպանութիւն բառը օգտագործելուն եւ «ազդարարեց» որ նման հաստատում չընէ կրկին⁵³: Վարչապետ Տաւուտօղլու եւս ցաւակցութիւն յայտնեց Համաշխարհային Ա. Պատերազմին զոհուած օսմանեան հպատակ

հայերու ժառանգներուն: Ապա կրկնեց թրքական ծանօթ թեզերը եւ եզրակացուց որ կը մերժեն ցեղասպանութիւն պատահած ըլլալը⁵⁴:

Թուրքիոյ Անվտանգութեան Խորհուրդը 24 Ապրիլէն ետք կայացած իր նիստին քննարկեց Հայոց Յեղասպանութիւնը իբր «1915ի իրադարձութիւններ» եւ ատոնք ցեղասպանութիւն ճանչցող երկիրներուն որոշումները հեռու նկատեց պատմական իրողութիւններէն եւ նշեց որ քաղաքական շահեր կը հետապնդէին եւ իրենց համար «իրաականօրէն առ ոչինչ են»⁵⁵:

Թուրքիոյ վարչապետին խորհրդական Էթիէն Մահճուպեանը 9 Մարտին պաշտօնէն հեռացուեցաւ՝ 1915ին տեղի ունեցածը ցեղասպանութիւն էր ըսելուն համար, թէ պատրուակը հանգստեան տարիքի հասնիլն էր⁵⁶: Ժողովրդային գետնի վրայ ալ հակահայ կեցուածքներ յայտնուեցան. Հակահայ ատելավառ պաստառներ երեւցան Իսթանպուլի, Մոսկւայի, Մանիսայի եւ Ուրտուի մէջ: Մոսկւայի մէջ «Կենչ Աթսըզլար» (Երիտասարդ ծի չունեցողներ) կազմակերպութիւնը պաստառի վրայ գրած էր. «Շնորհաւոր ըլլայ մեր հայրենիքը հայերէ մաքրագործելու 100րդ տարեդարձը: Մենք հպարտ ենք մեր անմահանուն նախնիքներով»⁵⁷: Բաբերդի քաղաքապետ Մելէ Մեմիշ «հերոսութիւն» որակեց 1918ին թուրք զինուորներու կողմէ Հայոց ջարդը⁵⁸: Վանի մէջ 100րդ Համալսարանին⁵⁹ մէջ «Հայկական Հարցը եւ Իրականութիւնը 100րդ տարելիցին» խորագրով «գիտաժողով» կազմակերպուեցաւ: Նշուեցաւ թէ 1915ը ոչ թէ պատճառ է այլ հետեանք⁶⁰: Թուրք գրող Այշէ Քուլէն CNN-Turk կայանէն նախ նշեց թէ «մենք հայերը առանց պատճառի չմորթեցինք», ապա ինքզինքն հակասելով ըսաւ թէ հայկական ցեղասպանութիւն չէ եղած⁶¹: Շարանը երկար է ժխտական ելոյթներուն. կը գոհանանք վերոյիշեալներով:

Միա կողմէն, թուրք մտաւորականութեան մէջ Հայոց Յեղասպանութեան գծով բացուած ճեղքը ընդլայնեցաւ: Թուրք լրագրող Աթիլլա Տիրիմ նշեց թէ «Թուրքիան ստիպուած պիտի ըլլայ ընդունելու Հայոց Յեղասպանութիւնը»: Թուրք փաստաբան Էրիք Քեսքին նշեց թէ Հայոց Յեղասպանութիւնը թուրք պետութեան կարմիր գիծերէն է եւ պնդեց որ «պետութիւնը կեղտոտ պատմութիւն ունի եւ անոր պէտք է առերեսուի»: Իշխանամէտ թուրք լրագրող Ռասիմ Օզան նշեց «Յեղասպանութիւն կատարուած է, այլեւ չեմ կրնար ինքզինքս խաբել»: Ճենկիզ Չանտար գրեց. «1915ի Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը գործած է իր անբըլ Թուրքիոյ միջազգային վարկին վրայ»: Լրագող Ահմէթ Հաքան 7 կէտերով հաստատեց Հայոց Յեղասպանութիւնը: Իսթանպուլի Պիլկի Համալսարանի դասախօսները առարկեցին համալսարանին մէջ Հայոց Յեղասպանութեան շուրջ խորհրդաժողովին դրուած արգելքին: Պիլիսի մէջ, մարդկային

իրաւանց ջատագով Իսմայիլ Պեշիկճի բացատրեց թէ ինք ինչպէս տեղեկացած էր Հայոց Յեղասպանութեան մասին. ան նշեց որ արդի Թուրքիան հիմնուած է հայերու եւ ասորիներու հարստութեան վրայ⁶²:

Քրտամէտ ժողովրդավար Դեմոկրատ Կուսակցութեան անդամ, Թուրքիոյ 7 Յունիսի ընտրութիւններէն ետք կազմուած համախոհական կառավարութեան Երուսական Միութեան հարցերով նախարար Ալի Հայտար Քոնչա նշեց, թէ Առաջին Աշխարհամարտին Թուրքիոյ հայերուն դէմ ցեղասպանութիւն գործուած էր: Անշուշտ թուրք ղեկավարները անոր խօսքերը դատապարտեցին եւ ատեն մը ետք ալ, այլ պատճառներով, ան հրաժարեցաւ կառավարութենէն⁶³: 3 Ապրիլ 2015ին, *Ռափիքա*ի մէջ Ռըտուան Շահին գրեց. «նոյնիսկ եթէ մեզի հայերը ներեն, Աստուած պիտի չներէ»⁶⁴:

Արտերկրի թուրքերէն, Գերմանիոյ Ձախերու կուսակցութեան անդամ Երեսփոխան Հաքան Թալ նշեց որ Թուրքիա պէտք է առերեսուի պատմութեան հետ եւ ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը⁶⁵:

Թրքական Իլթիխէմ Եայընլարը հրատարակչատունը հրատարակեց Ռեմոն Գէորգեանի «Հայոց Յեղասպանութիւն» ծաւալուն գիրքին թրքերէն թարգմանութիւնը (թարգմանիչ՝ Այշէն Թաշքենթ Էմքէջի)⁶⁶: Այս ալ յատկանշական երեսոյթ պէտք է նկատել: Թուրք գրող Այտըն Չոպուքճու խմբագրած եւ հրատարակած է «Ամօթ եւ Արժանապատուութիւն» գիրքը նուիրուած ցեղասպանութեան: Թուրքիոյ մէջ լոյս տեսնող չերքէզական *Գոշիփիս* ամսագիրի խմբագրութիւնը հրապարակեց Թուրքիա եւ արտասահման ապրող չերքէզներ, որոնք միատեղ քննարկած են Հայոց Յեղասպանութիւնը եւ առանց կաշկանդումի գործածած՝ Հայոց Յեղասպանութիւն եզրը: Թերթին խմբագիրը՝ Քուպան Քուրալ, նշած է որ հարցի քննարկումին ատեն երիտասարդ չերքէզները անհրաժեշտ համարած են «որ չերքէզները իրենց բաժին մեղքն ընդունին 1915ի մէջ եւ առերեսուին տեղի ունեցածին հետ»: Անգարայի Չերքէզներու Միութեան նախագահ Եինալ Քոզուքը իր կարգին նշած էր «թէ չերքէզները մասնակցած են Հայոց Յեղասպանութեան, ինչպէս նաեւ եղած են չերքէզներ, որոնք փրկած են հայերը»⁶⁷:

Վերջացնելու համար նշենք թէ տակաւին կը շարունակուի հայերուն բռնագրաւուած հողերուն հարցով «գող սիրտը դող» մտավախութիւնը: Անգարայի քաղաքապետ Մելիի Կէօքճէք «Ա. Հապէր» հեռուստակայանէն հարցագրոյցի մը ընթացքին նշեց որ հայերը եւ ՓՔՔն 1984ին մէկտեղուած էին եւ համաձայնած՝ Թուրքիոյ արեւմտեան մասին տիրանալու, ապա իրար միջեւ բաժնելու, եւ թէ հայերը կը ծրագրեն հոն Հայաստան հիմնել⁶⁸: Անշուշտ, ո՛չ 1984ին, ո՛չ ալ անցիկ վերջը նման համաձայնութիւն եւ գործակցութիւն մը եղաւ, սակայն ասիկա կ'արժէ նշել, ցոլացնելու համար թուրքերու մէջ առկայ մտավախութիւնը:

Թերեա նման մտավախութիւններ փարատելու համար, Թուրքիա կը շարունակէ նախկին հայաքնակ Արեւմտեան Հայաստանի տարածքի վերաբնակեցումի իր ուղեգիծը, որ յատկապէս 1980ականներուն աչքառու դարձած էր: Այսպէս, 27 Դեկտեմբեր 2015ին 327 թուրք-մեսխէթներ Ուքրանիայէն տեղափոխուեցան Երզնկա քաղաքը, ուր տեղաւորուեցան 30 բնակելի շէնքերու մէջ⁶⁹:

ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱՐՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

2015ին ԼՂՀ հարցը տեղքայի մէջ էր: Ագրպէճանական կողմը անելի կը հակէր սահմանային գրգռութիւններ յառաջացնելու, անելի ծանր գէնքեր գործածելու եւ զինուորներ ու քաղաքայիներ սպաննելու, քան թէ բանակցութիւնները լրջօրէն յառաջ տանելու, եւ այս՝ Յունուարէն սկսեալ: Սահմանային խախտումներն ու միջադէպերը նուազեցան միայն, տարուան կիսուն, Պաքուի մէջ տեղի ունեցող Եւրոպական խաղերուն ընթացքին:

Անցնող տարուան ընթացքին Ագրպէճանի ղեկավարները շարունակեցին իրենց անհիմն ու հակապատմական յոխորտանքներն ու գրգռիչ արտայայտութիւնները: Նախագահ Իլիհամ Ալիեւ, 25 Յունիսին, «Պաքուի Քարատաղ շրջանին մէջ գտնուող Փոլթայի մէջ ծովուծի «Ն» գորախումբին նոր ռազմակայանին բացման հանդիսութեան ընթացքին», ի միջի այլոց ըսաւ. «Ոչ միայն Լեռնային Ղարաբաղը մերն է, այլ նոյնիսկ արդի Հայաստանը ստեղծուած է ագրպէճանական պատմական հողերու վրայ...Էրիւան խանութիւն, Կոյսէն, Զանկեզօր մահալ՝ ասոնք մեր պատմական հողերն են, եւ մենք՝ ագրպէճանցիներս պէտք է վերադառնանք այս հողերուն: Ան շեշտեց որ ԼՂի հակամարտութիւնը պէտք է լուծուի միայն Ագրպէճանի հողային ամբողջականութեան ծիրէն ներս»⁷⁰:

Անշուշտ այս կէտը կը հակասէ Մատրիտեան սկզբունքներուն: Մինսքի Խմբակի նախկին համանախագահներէն ֆրանսացի Ժաք Ֆոր նշեց թէ մինչ Հայաստան կ'ընդունի բանակցիլ ինքնորոշման իրաւունքի, հողային ամբողջականութեան եւ բռնութիւն չգործելու սկզբունքներուն շուրջ, Ագրպէճան կ'ընդունի միայն հողային ամբողջականութեան կէտը⁷¹:

ԼՂՀի մէջ կայացած երեսփոխանական ընտրութիւններուն առիթով ԱՄՆ Պետական քարտուղարութեան բանքեր ճէֆ Ռատքէ յայտարարեց, թէ իրենք քանի չէին ճանչնար ԼՂՀն, ընտրութիւններն ալ պիտի չճանչնան, սակայն ան շեշտեց թէ «Արցախի Ժողովուրդը պէտք է դեր ունենայ իր ապագան որոշելու մէջ»⁷²: Այս կարելի է նկատել Ալիեւին ուղղուած անուղղակի պատասխան:

ԵԱՀԿի Մինսքի Խումբի ամերիկացի համանախագահ Ճեյմս Ուորլիք եւ քանի մը յատկանշական յայտարարութիւններ ըրաւ անցնող տարուան ընթացքին: Ան նախ նշեց թէ «բանակցային հոլովոյթին մէջ պէտք է հաշտի անել նաեւ Արցախի ժողովուրդին տեսակէտերը»⁷³: Ան նշեց թէ համանախագահները կը շարունակեն բանակցութիւններ վարել հիմնուելով նախապէս ձեռք բերուած յաջողութիւններու վրայ. ասոնք են՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ եղած տարածքներու յանձնումը, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, գաղթականներուն դրութիւնը եւ անոնց անվտանգութեան երաշխատումը: Այս հարցերն են որ պէտք է քննարկեն Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահները⁷⁴:

Այլ առիթով մը Ուորլիք նշեց թէ «առանց Ղարաբաղի կարգավիճակի յստակացումին հակամարտութեան լուծում հնարաւոր չէ: Իսկ «կարգավիճակի որոշումին համար անհրաժեշտ է Արցախի բնակչութեան ազատ կամքի արտայայտութիւնը», ան կրկին շեշտեց որ «թուր կողմերը պէտք է ուժ չկիրարկելու պարտաւորութիւն ստանձնեն»⁷⁵:

Ազրպէյճան սակայն, շարունակեց սահմանային խախտումները եւ ծանր գէնքեր գործածելով հայ զինուորներու եւ քաղաքացիներու մահուան պատճառ դարձաւ: Բնականաբար Հայաստան եւ ԼՂՀ պաշտպանական բանակները հակադարձեցին սոյն խախտումներուն:

Ազրպէյճանի Պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանով, Մարտին յայտարարեց որ «իրենք առաջին յարձակումով իսկ կարողութիւն ունին կործանելու հայկական զինուորական ուժին 70 առ հարիւրը»: Ըստ անոր, Ազրպէյճան կրնայ ծանր հարուած մը տալ հայերուն. «հարուած մը, որմէ հայերը հարիւրաւոր տարիներ դուրս պիտի չկարենան գալ»: Հասանով նշեց, որ ազրպէյճանցիք պիտի վերադառնան իրենց «պատմական հողերուն»՝ Երեւանի, Զանգեզուրի, Շուշիի եւ Ստեփանակերտի մէջ⁷⁶: Ազրպէյճան նոյնիսկ գրգռութիւններ ըրաւ Նախիջեւանի տարածքէն եւ սպառնաց Երեւանը ոմբակոծել Նախիջեւանէն⁷⁷: Հայկական զինուժը Երասխի ուղղութեամբ կանխեց ազրպէյճանական ներթափանցումի փորձ մը 1 Հոկտեմբերին⁷⁸:

Ազրպէյճանական կողմին եւ Ուորլիքի տարածքներու վերադարձման յայտարարութեան պատասխանեց ԼՂՀի ղեկավարութիւնը թէ «Արցախի սահմանադրօրէն ամրագրուած տարածքները ենթակայ չեն վերադարձի»⁷⁹:

Հայաստանի Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան ազրպէյճանական սպառնալիքներուն պատասխանեց ըսելով, թէ ազերիները եթէ պատերազմի արկածախնդրութեան դիմեն, ապա հայերը ի վիճակի են ծանր հարուած հասցնելու, մինչեւ իսկ՝ Պաքու մայրաքաղաքին: Արդարեւ, հայկական բանակը ունի «Թոչքա-Ու», «Թալֆուն», «Սմերք», «Ռ-17 Սքուտ» եւ «Իսքանտէր» արտածգային

հրթիռներ, որոնք կրնան ճշգրիտ հարուածներ տալ 300 քմ. հեռավորութեան վրայ գտնուող թշնամի թիրախներու⁸⁰: Ագրպէյճանցի լրագրող Մէօվսուն Հաճիեւ Ագրպէյճանի ղեկավարութեան քարոզչական բաժանմունքին մասին երկար յօդուածին մէջ նշած է թէ «ո՛չ Ագրպէյճանի իշխանութիւնը, ո՛չ ալ բանակը պատրաստ են նոր պատերազմի»: Ան կ'աւելցնէ թէ «ռազմական գործողութիւններու վերսկսումը կրնայ վերջ տալ ագրպէյճանական քարիւղին առեւտրոյին: Հայերու հրթիռակոծութեան տակ կրնայ յայտնուիլ սրբութիւն սրբոցը՝ Պաքու-Թիֆլիս-Ճէյհան քարիւղի խողովակաշարը: Նոյնիսկ Ղարաբաղի վերջնական կորուստը Ագրպէյճանի ներկայ վարչակազմին համար նուազ սարսափելի է, քան՝ թալանուած նաւթատուարներու հոսքին նուազումը»⁸¹: Կրնանք ըսել՝ «ի քերանոյ ըլնմէ դատեցար»:

ԵԱՀԿ Մինսքի համաձայնագահները Հոկտեմբերի վերջին երեան, Ստեփանակերտ եւ Պաքու իրենց կատարած այցելութիւններէն ետք, Հայաստանի եւ Ագրպէյճանի նախագահներուն միջեւ հանդիպում մը դասաւորեցին 19 Դեկտեմբեր 2015ին, Պերնի մէջ:

Նախքան հանդիպման անդրադառնալը, նշենք կողմերուն կեցուածքները՝ գազաթի հանդիպումէն առաջ:

Ագրպէյճանի Արտաքին Գործոց նախարար Էլմար Մամետիարով 10 Յուլիս 2015ին նշեց թէ իբրեւ փոխգիշըմ կրնան «վերատեսութեան ենթարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը միայն Ագրպէյճանի կազմին մէջ»: Ըստ իրեն «նախ զինուորները պէտք է ետ քաշուին, բռնի տեղահանումները վերադառնան տուն, ճամբաները բացուին եւ յետոյ միայն վերահաստատուին յարաբերութիւնները»⁸²:

Ի տես ագրպէյճանական կողմի ռազմական խախտումներուն եւ հայ զինուորներու եւ քաղաքացիներու սպանութեան, նախագահ Սարգսեան յայտարարեց թէ Հայաստանի հանրապետութիւնը ԼՂՀն կը նկատէ Հայաստանի անբաժան մաս, իսկ Արտաքին Գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան յայտարարեց, թէ եթէ հայ-ագրպէյճանական բանակցութիւնները ծախսողին եւ Ագրպէյճան զինուորական քայլերու դիմէ, Հայաստան պիտի ճանչնայ ԼՂՀի անկախութիւնը⁸³: Օտար դէտերու կողմէ զոյգ յայտարարութիւնները նկատուեցան ապակառուցողական:

ԼՂՀի հարցին առնչութեամբ Ռուսիոյ դիրքորոշումը կարեւոր է: Ռուսիա երկու կողմերուն զինամթերք կը հայթայթէ եւ կ'օգտագործէ ԼՂՀի հարցը երկու կողմերն ալ իր ազդեցութեան ծիրէն ներս պահելու: Երբ Ագրպէյճան որոշ չափով հեռացաւ ռուսական մօտիկութենէն, ռուսական մամուլը հակազդեց:

Այսպէս, Ռուսիոյ Արտաքին Գործոց նախարար Սերկէյ Լաւրովի Պաքու այցելութենէն օր մը ետք, երբ ռուսական կողմը չէր բաւարարուած արդիւնքներէն, ռուսական պետական կեդրոնական

քարոզչական միջոցներէն մէկը՝ «Ռիա Նովոսթի» լրատուական գործակալութիւնը, փոքրիկ յօդուած մը հրատարակեց Ստեփանակերտի մէջ ԼՂՀի անկախութեան տօնակատարութեան մասին «Լեռնային Ղարաբաղը ներկայացնելով իբրեւ անկախ եւ ինքնիշխան երկիր», ինչ որ Պաքուն ջրագրգողութեան առաջնորդեց⁸⁴:

Յաջորդ դէպքը ծագեցաւ երբ Ռուսիա օգտագործեց Ազրպէյճանի տարածքը՝ իր կործանիչները դրկելու Սուրիա՝ ռմբակոծումներ կատարելու: Ասոր վրայ Թուրքիա Պաքու դրկեց Թուրքիոյ զինեալ ուժերու զլխատր սպայակոյտի պետ Հուլուսի Աքարը: Թուրքիա ճնշեց եւ համոզեց Ազրպէյճանը արտօնութիւնը յետս կոչելու եւ փակելու օդային միջանցքը: Ի պատասխան այս քայլին, Ռուսիա Կասպից ծովու իր հրթիռակիր նաւատորմէն ռմբակոծեց Սուրիոյ իր ընտրած թիրախները: Այս առիթով ռուս վերլուծաբան Սթանիսլաւ Թարասով «Ռեկնում»-ի մէջ գրեց թէ «չի բացառուիր որ Սուրիոյ մէջ իր ռմբակոծումները շարունակելու համար [Ռուսիա] օգտագործէ Ստեփանակերտի օդակայանը»⁸⁵: Անշուշտ, յայտնի չէ թէ Թարասով որքանո՞վ Մոսկուայի իշխանութիւններուն տեսակէտը կը ներկայացնէ: Նման քայլ մը կրնայ Ռուսիոյ եւ Թուրքիոյ ու արեւմտեան երկիրներու միջեւ հարցեր ստեղծել եւ Ռուսիոյ չէզոքութիւնը խախտել Միւսքի խմբակին մէջ: Այստեանդեք՝ Թարասովի այս գրութիւնը մտածել կու տայ թէ Ռուսիա-Ազրպէյճան յարաբերութիւնները, հակառակ Փութինի Պաքու այցելութեան, այնքան ալ փայլուն չեն:

9 Նոյեմբեր 2015ին Ռուսիոյ Արտաքին Գործոց նախարար Սերկէյ Լաւրով, նախապէս չձանուցուած այցելութիւն մը տուաւ Երեւան: Հայկական կարգ մը լրատուական աղբիւրներ նշեցին թէ Լաւրով եկած էր Լեռնային Ղարաբաղի հարցին մասին խօսելու⁸⁶: Յաջորդ օրը՝ 10 Նոյեմբերին, ռուսական *Քոմերսանթ* թերթը ռուսական աղբիւրներէ քաղելով հաղորդեց որ Ղարաբաղի հարցով «բանակցութիւններուն մէջ այժմ կը քննարկուի լուծման տարբերակ մը, որուն համաձայն հայկական կողմը կը վերադարձնէ Ղարաբաղի յարակից տարածքներուն մէկ մասը՝ բացառութեամբ Լաչինի միջանցքին եւ թերեւս յաւելեալ մէկ շրջան, որուն դիմաց Պաքուն թէւ պաշտօնապէս պիտի չճանչնայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը, սակայն պատրաստակամութիւն պիտի ստանձնէ խնդիրը լուծել խաղաղ բանակցութիւններով»⁸⁷:

Հայաստանի թերթերը իրենց կարգին նշեցին, թէ խօսքը Լեռնային Ղարաբաղի յարակից 7 տարածքներէն հինգը վերադարձնելու մասին է, որուն փոխարէն Ռուսիա զօրք պիտի բերէր այս տարածքներուն վրայ, որպէսզի պատերազմը չվերսկսէր եւ պիտի համոզէր Ազրպէյճանը՝ Հայաստանի շրջափակումը վերցնելու: Լաչինի միջանցքը եւ Քարվա-

ճառը (Նախկին Քելպաճարը) հայկական հսկողության տակ պիտի շարունակվեին մնալ, իսկ Ազրայեճան պիտի դադրեցնէր զինուորական յարձակումները եւ խաղաղ բանակցութիւններով պիտի լուծէր խնդիրը⁸⁸:

Ազրայեճանի Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, արտաքին կապերու պետ Նովրուզ Մամետով դիտել տուաւ որ «ժամանակը հասած է վերադարձնելու ազրայեճանական հողերը» եւ թէ առաջին հանգրուանին պէտք է վերադարձուին հինգ տարածքներ⁸⁹:

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարը իր կարգին նշեց թէ Ղարաբաղի առնչութեամբ որեւէ հարց կարելի չէ լուծել առանց Արցախի ժողովուրդին համաձայնութեան: Ան նշեց թէ Լաւրովի հետ տեսակցութեան ընթացքին շեշտած է թէ «Մինսքի հմբակը հինգ յայտարարութիւններ կատարած է: Համանախագահները ներկայացուցած են մէկ ամբողջութիւն, որ կ'ընդգրկէ սկզբունքներ եւ տարրեր: Անոնց վրայ պէտք է հիմնուի Ղարաբաղեան հակամարտութեան լուծումը» եւ հերքեց ազատագրուած տարածքները յանձնելու մասին լուրերը⁹⁰:

Իր կարգին, ԼՂՀի Նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան պետ Դաւիթ Բաբայեան «Նիուզ» կայքէջին տուած իր մեկնաբանութեան մէջ ընդգծեց որ «վերադարձ 1920-21 – 1988-91 թթ. սահմաններին չի լինի»⁹¹:

Հայաստանի եւ Ազրայեճանի Նախագահներու Չուփցերիոյ 19 Դեկտեմբեր 2015ի հանդիպումը, ըստ մամուլին, եղած է ապարդիւն: Ազրայեճանի Արտաքին Գործոց Նախարարը հանդիպումը դրական որակած է, իսկ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարը՝ ճիշդ հակառակը⁹²: Կողմերը խօսած են զինեալ բախումներուն մասին եւ խոստացած՝ բանակցութիւնները շարունակել⁹³:

Մինչ այդ ԼՂՀի սթաթուս քօն կը մնայ անփոփոխ, թեւեւ եւրոպական հորիորդարանական վեհաժողովին յաճախումը 24 կողմ եւ 16 դէմ քուէներով ընդունած է բրիտանացի երեսփոխան Ռոպըրթ Ուոլթըրի «քոնութեան մագլցումը Լեռնային Ղարաբաղի եւ Ազրայեճանի այլ գրաւեալ տարածքներու մէջ» հակահայ զեկուցումը⁹⁴: Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարը Եւսիս-Վին կոչ ուղղեց նկատի առնել համանախագահներուն յայտարարութիւնները եւ զգուշանալ Մինսքի հմբակին զուգահեռ այլ ձեառքափէր որոնելու փորձերէն: Ան նաեւ զարմանք յայտնեց թէ ինչպէս զեկուցաբեր մը տեղեկագիր կը ներկայացնէ առանց Արցախ այցելած ըլլալու⁹⁵:

Վերոյիշեալ տեղեկագրին լոյս ընծայումէն ետք ԵԱՀԿ Մինսքի հմբակի ամերիկացի համանախագահ Ուորլոյք յայտարարեց, որ Ղարաբաղեան տագնապին մասին որեւէ զեկուցում կամ բանաձեւ հրապարակելէ առաջ միջազգային կազմակերպութիւնները պէտք է խորհրդակցին ԵԱՀԿի Մինսքի հմբակի համանախագահներուն հետ⁹⁶:

Ամեն պարագայի գեկուցումներ եւ բանաձեւեր գետնի վրայ կացութիւն չեն փոխեր: Հայաստանի դիրքորոշումը կը մնայ անփոփոխ. Նախագահ Սերժ Սարգսեան Արեւելեան գործընկերութեան Ռիկայի գազաթաժողովին յայտարարեց, թէ «Ղարաբաղը որեւէ առնչութիւն չունի Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան հետ, որովհետեւ ան երբեք չէ հանդիսացած անկախ Ազրպէյճանի տարածքին մէջ: Պաքուի իշխանութիւնները հետեւողականօրէն կը փորձեն տապալել խաղաղ հոլովոյթը եւ մերժել կարգաւորումի սկզբունքները»⁹⁷:

Իսկ միջազգային շրջանակներու մէջ տարբեր մտածումներ կան: Անոնցմէ նմուշ մըն է Արցախի հարցով նախկին միջնորդ շուէտացի դիւանագետ Եան Իլիասընի կարծիքը: Ըստ անոր, արցախեան հակամարտութեան «կարգաւորումին համար կարելի է որդեգրել «ինքնավարութիւն առաւել» կամ «անկախութիւն նուազ» ձեաչափերը»: Ան աւելցուց թէ այս հարցին մէջ «հակասութիւններ կան տարածքային ամբողջականութեան եւ ազգերու ազատ ինքնորոշման սկզբունքներուն շուրջ»: Ըստ Էլիասընի «հայկական եւ ազրպէյճանական կողմերը պէտք է անկեղծ քննարկումներ կատարեն»⁹⁸:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հայկական Հարցի Հոլովոյթը՝ թէ՛ Հայկական Յեղասպանութեան ճանաչումի, թէ՛ Արցախի Հիմնախնդրով, շարունակական է: Բնականօրէն, 2016ին նոր իրադարձութիւններ պիտի գան աւելնալու Յեղասպանութեան 100ամեակի տարուան եղելութիւններուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ «Հայոց Յեղասպանութեան Հարկումեակի Համահայկական Հռչակագիր», *Հարթօւք*, 31 Յունուար 2015, էջ 2:

² Robert Fisk, "The Gallipoli Centenary is a Shameful Attempt to Hide the Armenian Holocaust", *The Independent*, London, 20 January 2015.

³ Ճենկիզ Զանտար, «Թուրքիոյ Յեղասպանութեան Ճակատամարտին Կելիփոլին Կը Յաղթանակէ», թրգմ. Սարգիս Մինասեան, *Նոր Օր Շաբաթաթերթ*, Լոս Անճելըս, 14 Մայիս 2015, էջ 3:

⁴ «Թուրքիոյ Մէջ Յեղասպանութեան Մասին Աւելի Գրուած Է Քան Կալիփոլիի Ճակատամարտի Մասին», *Հարթօւք*, 1 Մայիս 2015. նաեւ՝ «Թուրքիոյ Մէջ Հայոց Յեղասպանութեան Մասին Մէկ Շաբթուան Ընթացքին 2404 Լուր Հրատարակուած Է», *Ազդակ*, 5 Մայիս 2015:

⁵ «Աշխարհի Մէջ Մէկ Միլիար 250 Միլիոն Մարդ Հետեւած Է Ապրիլ Քսանչորսեան Ձեռնարկներուն», *Հարթօւք*, 25 Մայիս 2015:
Ժողովրդային գետնի վրայ, Քարտաշեան քոյրերու այցը Հայաստան եւ Միջինարկաբերդ, ըստ մամուլին, ունեցած է միլիոնաւոր հետեւորդներ,

- որոնք հեռուստատեսային հեռարձակումներուն եւ դիմատետրի գրոյթիններուն հետեւած են ու լսած հայոց դէմ գործուած ցեղասպանութեան մասին:
- ⁶ «Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետին Պատգամը Հայերուն», *Մասիս*, Մարտ-Ապրիլ 2015, էջ 2-5:
- ⁷ «Աստորիան Ճանցաւ Հայոց Ցեղասպանութիւնը», *Հարթօւք*, 22 Ապրիլ 2015. Նաեւ՝ «Հայաստան Ողջունեց Լիւքսեմպուրկի Հայոց Ճանաչման Քայլը», *Հարթօւք*, 8 Մայիս 2015. Նաեւ՝ «Պրագիի Ծերակոյտը Կը Ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը», *Ազդակ*, 4 Յունիս 2015. Նաեւ՝ «Փարակոյտի Ծերակոյտը Ճանցաւ Հայոց Ցեղասպանութիւնը», *Ազդակ*, 30 Հոկտեմբեր 2015:
- ⁸ *Nouvelles D'Arménie*, Փարիզ, Մայիս 2015, էջ 15:
- ⁹ Նոյն:
- ¹⁰ «Պեմիքայի Ներկայացուցիչներու Պալատը Վերստին Կը Ճանչնայ Հայոց Ցեղասպանութեան Փաստը», *Արարար*, 25 Յունիս 2015:
- ¹¹ «Պեմիքայի Վարչապետը Վերահաստատեց Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Իր Երկրին Դիրքորոշումը», *Ազդակ*, 23 Մայիս 2015:
- ¹² «Գերմանիոյ Նախագահը Ճանցաւ Հայոց Ցեղասպանութիւնը», *Նոր Օր*, Լոս Անճելես, 30 Ապրիլ 2015:
- ¹³ «Ցեղասպանութեան Բանաձեւը Թուրքիոյ Փոխգլխւոր Հասնելու Ցաղթաթուղթը», *Sozcu*, *Հարթօւք*, 25 Հոկտեմբեր 2015:
- ¹⁴ «Կիպրոսի Խորհրդարանը Միաձայնութեամբ Որդեգրեց Հայոց Ցեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Օրինագիծը», *Ազդակ*, 3 Ապրիլ 2015:
- ¹⁵ «Զեխիոյ Խորհրդարանը Կը Ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը», *Ազդակ*, 11 Ապրիլ 2015:
- ¹⁶ "Czech FM Considers Humanity's duty to Remember About Armenian Genocide", *Zartontk*, English Edition, Յունիս, թիւ 138/19. Նաեւ՝ «Հայաստանի եւ Զեխիոյ Խորհրդարաններու Նախագահներու Հանդիպում», *Հարթօւք*, 13 Դեկտեմբեր 2015:
- ¹⁷ "European Parliament Adopts Armenian Genocide Resolution", *Zartontk*, English Edition, Ապրիլ 20-26, 2015, թիւ 77:
- ¹⁸ Նոյն:
- ¹⁹ «Լատին Ամերիկայի Խորհրդարանը Ճանցած է Հայոց Ցեղասպանութիւնը», *Ազդակ*, 3 Օգոստոս 2015:
- ²⁰ «Հարաւային Տաքթա Կը Ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը», *Ազդակ*, 27 Փետրուար 2015. Նաեւ՝ "Nevada Recognizes The Armenian Genocide", *Zartontk*, English Supplement, April 26, 2015. Նաեւ՝ "State of Georgia Has Declared April 24 As Armenian Genocide Remembrance Day", *Nor Or*, 9 April 2015:
- ²¹ «Սպանիոյ Ծերակոյտը Մերժեց Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչցող Բանաձեւը», *Ազդակ*, 15 Մայիս 2015. Նաեւ՝ «Սան Սեպասթիան Միացաւ Հայոց Ցեղասպանութիւնը Պաշտօնապէս Ճանցած Սպանական Քաղաքներուն», *Ազդակ*, 20 Ապրիլ 2015. Նաեւ՝ «Պեթերան Եւ Ճանցաւ Հայոց Ցեղասպանութիւնը. Ո՛վ Է Յաջորդը», *Հարթօւք*, 20 Մարտ 2015.

- նաե՛ «Սպանիոյ Սիրա Քաղաքը Ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Հարթօւք*, 5 Հոկտեմբեր 2015. նաե՛ «Սպանական Սանթա Մարկարիթան Պաշտօնապէս Ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 28 Մայիս 2015. նաե՛ «Սպանիոյ Ալբայա Քաղաքը Պաշտօնապէս Ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 29 Հոկտեմբեր 2015. նաե՛ «Ալգերան Հայոց Յեղասպանութիւնը Ճանչցող Սպանիոյ 12րդ Քաղաքը Դարձաւ», *Հարթօւք*, 28 Նոյեմբեր 2015. նաե՛ «Արակոնի Խորհրդարանը Բանաձեւ Ընդունած է Հայոց Յեղասպանութեան Վերաբերեալ», *Հարթօւք*, 3 Դեկտեմբեր 2015:
- ²² “Corse. Reconnaissance du Genocide Armenien”, *Nouvelles d’Arménie*, Մայիս 2015, էջ 106:
- ²³ «Իտալիոյ Փիէմոնթ նահանգի Իվրէայի Քաղաքային Խորհուրդը Ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Հարթօւք*, 16 Հոկտեմբեր 2015. նաե՛ «Իտալիոյ Ռաւեննա Քաղաքը Ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Հարթօւք*, 30 Հոկտեմբեր 2015. նաե՛ “Italy’s Abruzzo Region Also Recognizes the Armenian Genocide”, *Zartontk*, English Edition, Նոյեմբեր 2-8, 2015. նաե՛ «ԼԱքուիլա Քաղաքը Ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 4 Դեկտեմբեր 2015. նաե՛ «Իտալիոյ Սիրանօ Շրջանը Ընդունեց Հայոց Յեղասպանութիւնը», *Հարթօւք*, 24 Դեկտեմբեր 2015:
- ²⁴ Աստորալիոյ Ուիլոպի Քաղաքը Ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ*, 12 Մայիս 2015. նաե՛ “City of Ryde, Australia, Recognizes Armenian Genocide”, *Zartontk*, Ապրիլ 20-26, 2015. նաե՛ «Ուլքրանիոյ Տեքփոփեթրովք Քաղաքը Ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը», *Ազդակ* 29 Հոկտեմբեր 2015:
- ²⁵ “The White Houses Office of Press Secretary”, April 23, 2015, as published in *Armenian Weekly*, Boston.
- ²⁶ «Իսլանտայի Կրթութեան Նախարարը. Կը Կիսեմ Հայ Ժողովուրդի Ցաւը», *Հարթօւք*, 22 Յունիս 2015:
- ²⁷ “Church of Ireland Calls for Recognition of the Armenian Genocide”, *Zartontk*, Մայիս 4-10, 2015:
- ²⁸ “Serbia Parliament MPs Propose Resolution on Armenian Genocide”, *Nor Or*, 23 April 2015:
- ²⁹ “UK House of Lords Debate on Armenian Genocide”, *Zartontk*, 22-28 Յունիս 2015:
- ³⁰ «Հայաստանի Նախագահը Լոնտոնի Մէջ մասնակցեցաւ Հայոց Յեղասպանութեան Նահատակներու Յիշատակի Արարողութեան», *Հարթօւք*, 30 Հոկտեմբեր 2015:
- ³¹ «Վիեթնամ Կը Քննարկէ Հայոց Յեղասպանութեան Ճանաչման Հնարաւորութիւնը», *Հարթօւք*, 28 Հոկտեմբեր 2015. նաե՛ “Holy Mass Dedicated to the Armenian Genocide Held in Hanno”, *Zartontk*, 14-20 Դեկտեմբեր 2015:
- ³² International Association of Genocide Scholars to Turkish President Erdogan”, *Nor Or*, 23 Ապրիլ 2015. նաե՛ «Եւրոպայի Կանաչները Վաերացուցած են Հայոց Յեղասպանութեան Մասին Բանաձեւ Մը», *Ազդակ*, 18 Նոյեմբեր 2015:

- ³³ «Հայոց Յեղասպանության Մասին Որոշում Որդեգրում», *Ազդակ*, 28 Հոկտեմբեր 2015:
- ³⁴ “Armenian Genocide Centennial Commemoration Ceremony in Mongolia”, *Zartong*, 20-26 Ապրիլ 2015:
- ³⁵ *Nouvelles d’Arménie*, Մայիս 2015, էջ 14:
- ³⁶ Նոյն:
- ³⁷ «Nansens’ Family Joins the Armenian Genocide Recognition March in Oslo”, *Nor Or*, 30 Ապրիլ 2015:
- ³⁸ *Nouvelles d’Arménie*, Մայիս 2015, էջ 40-45:
- ³⁹ “Turkish Embassy in Mexico Censor A Film Festival About Armenian Genocide”, *Nor Or*, 30 Ապրիլ 2015:
- ⁴⁰ “Biennale de Pekin: Aggression Azerie au Pavillon Armenienne”, *Nouvelles d’Arménie*, Նոյեմբեր 2015, թիւ 233, էջ 14:
- ⁴¹ «Պան Քի Մուն Կը Մերժէ Յեղասպանութիւն Եզըր Գործածել», *Ջարթօնք*, 15 Ապրիլ 2015:
- ⁴² ՄԱԿի Մարդկային Իրաւանց Ցանձնախումբի ճանաչումին մասին տե՛ս՝ Ջաւէն Մարդեան, «Ջանքեր ՄԱԿի 30րդ Պարբերութեան Վերահաստատման Ուղղութեամբ», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, ԼՔ. Հարոր, 2012, էջ 461-464:
- ⁴³ «Հայկական Հարցի Հոլովոյթը 2014ին», *Արարարի Բացառիկ*, 1 Յունուար 2015:
- ⁴⁴ «ՄԻԵԴը Մերժեց Զուիցերիոյ Հայցը Իսկ Յեղասպանութեան Վերաբերեալ Հայկական Դիրքորոշումը Յաղթեց», *Ջարթօնք*, 16 Հոկտեմբեր 2015. Նաեւ՝ “Plus dur qu’en Premiere Instance”, *Nouvelles d’Arménie*, Նոյեմբեր 2015, թիւ 223, էջ 25:
- ⁴⁵ AFP, Armand Bouvier With Mariam Harutyunyan, “Turkish Politician had Right to Deny Armenian Genocide: Europe court”:
- ⁴⁶ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Դատ Բացաւ Թուրքիոյ Սահմանադրական Դատարանին Մօտ», *Ջարթօնք*, 29 Ապրիլ 2015:
- ⁴⁷ “Armenia Withdraws Peace Protocols with Turkey from Parliament”, *Today’s Zaman*, Istanbul, 17 February 2015.
- ⁴⁸ Թաթուլ Յակոբեան, «Արձանագրութիւնները Ուժի Մէջ Են, Հայաստանն Այժմ Թուրքիայից Չունի Տարածքային Պահանջ», *Ազդակ*, 4 Մայիս 2015, էջ 4:
- ⁴⁹ Նոյն:
- ⁵⁰ Նոյն:
- ⁵¹ Օրինակ, անցեալին ղեկավար դիրքերու մէջ գտնուած մտաւորական գրող Հայկ Նազգաշեան գրեց. «Եթէ փոխուած բան մը կայ թուրքերու մտածելակերպին մէջ ի նպաստ արդարութեան եւ իրաւունքի, թող հայոց բռնագրաւած հայրենիքը վերադարձնեն. գէթ Անիէն մինչեւ Արարատ» (Հայկ Նազգաշեան, «Երեք Հայեր Երեսփոխան Ընտրուած Են Թուրքիա», *Ջարթօնք*, 25 Յունիս 2015): Այս մէկը կու տանք իբրեւ օրինակ:

- ⁵² Siranush Ghazanchyan, "Turkish President Addresses Acting Armenian Patriarch Aram Ateshyan", *Arm News*, 2, 24-4-2015:
- ⁵³ "Erdogan Condemns Pope for Armenian 'Genocide' Comment", *Al Jazeera English*, 15-4-2015:
- ⁵⁴ «Տաւտօղլու Յեղասպանութիւն եզրը որակած է Որպէս Պատասխանատուութիւնը Թուրքիոյ Վրայ Բարդելու Միջոց», *Հարթօթք*, 22 Ապրիլ 2015:
- ⁵⁵ «Թուրքիոյ Անվտանգութեան Խորհուրդը Նիստ Յատկացուցած Է "1915ի Իրադարձութիւններուն", *Հարթօթք*, 1 Մայիս 2015:
- ⁵⁶ «Յեղասպանութեան Մասին Խօսել Ետը Մահճուպեան Աշխատանքէն Հեռացուեցաւ... Տարիքի Պատճառով», *Հարթօթք*, 17 Ապրիլ 2015:
- ⁵⁷ "Banners Celebrating Genocide Displayed in Turkey", *Armenian Weekly*, Մարտ 2015:
- ⁵⁸ "Turkey Mayor Calls Armenian Massacres Heroism", <http://news.am/evg/news/253488.html/> :
- ⁵⁹ «100րդ Համալսարան», *Հարթօթք*, 6 Յունիս 2015, էջ 3:
- ⁶⁰ «Վանի Մէջ Հայկական Հարցին Նուիրուած Երկօրեայ Գիտաժողով Հրաւիրուած Է», *Հարթօթք* 1 Յունիս 2015:
- ⁶¹ "Ataturk Zombi Turkish Writer Ayse Kulia 'We didn't butcher the Armenians without Reason'" 5 January 27, 2015, *Gagrule.net* :
- ⁶² «Թուրքիան Ստիպուած Պիտի Ըլլայ Ընդունելու Հայոց Յեղասպանութիւնը», *Հարթօթք*, 21 Մարտ 2015. Նաեւ՝ "Statement From Bilgi University Academics Against Censorship of Genocide Conference", *Agos*, 27 April 2015. Նաեւ՝ «Թուրք Փաստաբան Էրէն Քեքքիս Խիզախ Յայտարարութիւններով Հանդէս Եկաւ», *Հարթօթք*, 11 Փետրուար 2015. Նաեւ՝ «Իշխանամէտ Թուրք Լրագրող. «Այո, Յեղասպանութիւն Կատարուած Է, Այլեւս Չեմ Կրնար Ինքզինքս Խաբել», *Ազրակ*, 28 Ապրիլ 2015. Նաեւ՝ «Ճենկիզ Չանտար, «Թուրքիոյ Յեղասպանութեանց Ճակատամարտին Կեյիփոլին Կը Յաղթանակէ», *Նոր Օր*, Լոս Անճելէս, 14 Մայիս 2015. Նաեւ՝ "Turkish Journalist Comes Up With 7 Points Confirming Armenian Genocide", 1 May 2015, <http://news.am/eng/news/264728.html>. Նաեւ՝ "Officials and Society in Eastern Turkey Confront Legacy of the Armenian Genocide", *Zartok*, English Edition, 20-26 Ապրիլ 2015:
- ⁶³ Rudaw, "Turkey's New EU Envoy Admits Armenian Genocide" 1 September 2015, <http://rudaw.net/english/middleeast/turkey/01092015> :
- ⁶⁴ *Nouvelles d'Arménie*, Մայիս 2015:
- ⁶⁵ «Գերմանիոյ Խորհրդարանի Թուրք Անդամը Խօսած Է Հայոց Յեղասպանութեան Ճանաչման Մասին», *Հարթօթք*, 28 Փետրուար 2015:
- ⁶⁶ «Հայ Պատմաբանին Հայոց Յեղասպանութեան Մասին Գիրքը Հրատարակուած Է Թրքերէն Լեզուով», *Հարթօթք*, 1 Յունիս 2015:
- ⁶⁷ «Թուրքիոյ Մէջ Չերգէզները Քննարկած Եւ Հայոց Յեղասպանութեան Մէջ Չերգէզներու Դիրքը», *Հարթօթք*, 20 Մայիս 2015:

- ⁶⁸ «Ըստ Անջարայի Քաղաքապետին ՔԱԿը Հայկական Կազմակերպություն է», *Ազդակ*, 27 Մայիս 2015:
- ⁶⁹ «327 Թուրք-Մեսխեթներ Ուքրանիայէն Տեղափոխուած են Թուրքիա», *Ազդակ*, 28 Դեկտեմբեր 2015:
- ⁷⁰ «Ոչ Միայն Ղարաբաղը Մերն է, Այլ Նաեւ Հայաստանը Ստեղծուած է Ազրայէճանական Հողերու Վրայ. Այիւ», *Ազդակ*, 10 Յուլիս 2015:
- ⁷¹ “Yerevan Aims to Keep the Principles of Settlement of Nagorno Karabagh Conflict, While Baku – Only One: Jacques Faure”, *Zartontk*, 22-28 Յունիս 2015:
- ⁷² «Ծանաչում Չկայ», *Արարապ*, 3 Մայիս 2015:
- ⁷³ Ուորլիք, «Բանակցային Հոլովոյթին Մէջ Պէտք է Հաշուի Նստին Արցախի Ժողովուրդին Հետ», *Ազդակ*, 13 Մարտ 2015:
- ⁷⁴ «Հայաստան Տարածքներ Պիտի Չվերադաձնէ Առանց Անվտանգութեան Երաշխիքներու», *Ազդակ*, 21 Յուլիս 2015, էջ 10:
- ⁷⁵ «Ուորլիքի Երկրորդ Սկզբունքը՝ Ազատ Կամքի Դրսեւորում», *Արարապ*, 21 Յուլիս 2015:
- ⁷⁶ «Հասանով Հայերուն Մասին», *Արարապ*, 25 Մարտ 2015:
- ⁷⁷ “Menaces Azerbaidjanaises de Bombarder Erevan Depuis le Nakhichevan, *Nouvelles d’Arménie*», թիւ 221, 2015, էջ 10:
- ⁷⁸ «Հայկական Զինուժը Երախի Ուղղութեամբ Կանխած է Ազրայէճանական Ներթափանցման Փորձը», *Ջարթօք*, 3 Հոկտեմբեր 2015:
- ⁷⁹ Դաիթ Ջամալեան, «Ինչու՞ է Ազրայէճանը Յայտարարում, Որ Յարձակելու է Որպէսզի Մենք Պատրաստ Լինենք», *Ազդակ*, 28 Յուլիս 2015, էջ 5:
- ⁸⁰ «Մինչեւ Ուր Կրնան Խարուածել Հայկական Բանակի Հեռահար Հրթիռները», *Ազդակ*, 27 Հոկտեմբեր 2015:
- ⁸¹ Նոյն:
- ⁸² «Ազրայէճանցիք Պատրաստ են Վերանայելու Լեռնային Ղարաբաղի Կարգավիճակը Միայն Ազրայէճանի Կազմին Մէջ», *Ազդակ*, 11 Յուլիս 2015:
- ⁸³ “Armenia Will Recognize Karabagh’s Independence If Negotiations Fail, says Nalbandian”, *Zartontk*, 12-18 Հոկտեմբեր 2015:
- ⁸⁴ Գէորգ Դարբինեան, «Ռուս-Ազրայէճանական Յարաբերութիւններում Ամէն Ինչ Այդքան էլ Հարթ Չէ», *Ազդակ*, 9 Սեպտեմբեր 2015, էջ 5:
- ⁸⁵ Գէորգ Դարբինեան, «Հայաստանը Ռուս-Թրքական Լարման Առանցքում», *Ազդակ*, 21 Հոկտեմբեր 2015, էջ 5:
- ⁸⁶ “Armenia, Azerbaijan Move Closer to Settling Frozen Conflict”, Media Center, Image, 17 November 2015, from the internet Stratfor Global Intelligence: <https://www.stratfor.com/image/armenia-azerbaijan-move-closer-setting-frozen-conflict> :
- ⁸⁷ Վահրամ Էմմիեան, «Զինադադարի Երաշխատող», *Ազդակ*, 13 Նոյ. 2015:
- ⁸⁸ “Armenia, Azerbaijan Move Cloesr to Settling Frozen Conflict”, Media Center:
- ⁸⁹ «Որոշում Չկայ Առանց Արցախի», *Արարապ*, 21 Նոյեմբեր 2015:
- ⁹⁰ Նոյն:

⁹¹ Լեւոնիտ Մարտիրոսեան, «Լայն Հայեացք...Տարածքներ, Որոնք Յանձնել Զի Կարելի», *Ազդակ*, 8 Դեկտեմբեր 2015:

⁹² «Սարգսեան-Ալիեւ Հանդիպումը Վերջ Գտաւ Առանց Արդիւնքի», *Ազդակ*, 21 Դեկտեմբեր 2015:

⁹³ «Մամետիարով Սարգսեան-Ալիեւ Հանդիպումը Կը Գնահատէ Դրական», *Ազդակ*, 22 Դեկտեմբեր 2015:

⁹⁴ Գրութեան մէջ գործածուած բազմաթիւ արտայայտութիւններ, ինչպէս՝ «այլ գրաւեալ տարածքներ», Հայաստանի եւ Արցախի համար անընդունելի էին («Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի Յանձնախումբին Մէջ Հակահայկական Զեկուցում Ընդունուած է», *Ազդակ*, 5 Նոյ. 2015):

⁹⁵ «Որոշում Զկայ Առանց Արցախի», *Արարապ*, 21 Նոյեմբեր 2015:

⁹⁶ «Ուրլիք Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովին Կը Յորդորէ Առանց Խորհրդակցելու Չորդեգրել Ղարաբաղեան Տագնապին Վերաբերեալ Զեկուցումը», *Ազդակ*, 78 Նոյեմբեր 2015:

⁹⁷ «Ղարաբաղ Որեւէ Անչլութիւն Չունի Ազրպէյճանի Տարածքային Ամբողջականութեան Հետ», *Արարապ*, 23 Մայիս 2015:

⁹⁸ «Հակասական Սկզբունքներ», *Արարապ*, 12 Նոյեմբեր 2015:

THE EVOLUTION OF THE ARMENIAN QUESTION DURING THE CENTENNIAL YEAR OF THE ARMENIAN GENOCIDE (2015)

(Summary)

ZAVEN MESSERLIAN
a_e_c@cyberia.net.lb

The evolution of the Armenian Question continued during the centennial of the Armenian Genocide. The Armenians of the world agreed upon a pan-Armenian declaration, proclaimed in Yerevan by the President of the Republic of Armenia.

Although Turkey tried to overshadow the centennial commemorations of the Armenian Genocide by the centennial commemoration of the Gallipoli campaign, major Genocide commemorations took place all over the world.

Pope Francis I celebrated a mass in the Vatican on 12 April 2015, in the presence of the Armenian president and the Catholicos, mentioning the Armenian Genocide by name. The central celebration took place in Yerevan on April 24 in the presence of the presidents of Russia, France, Serbia and Cyprus. Austria, Luxembourg, Brazil and Paraguay joined the ranks of the countries recognizing the Armenian Genocide.

The Armenian Catholicosate of Cilicia opened a court case in the Turkish Supreme court asking for the restitution of its properties in Sis.

In the case of Artsakh (the Republic of Nagorno Karabagh), stalemate continued as well as border clashes. No progress was achieved and the status quo remained despite the efforts of the Minsk Group and meetings of the leaders of Armenia and Azerbaijan.